«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

Ա Վ Ա Ր Տ Ա Կ Ա Ն Հ Ե Տ Ա Զ Ո Տ Ա Կ Ա Ն Ա Շ Խ Ա Տ Ա Ն Ք

Հետազոտության թեման՝ Կրտսեր դպրոցականների իմացական կարողությունների զարգացման առանձնահատկությունները

Առարկան՝ Տարրական

Հետազոտող ուսուցիչ՝ Ա. Ավետիսյան

Ուսումնական հաստատություն՝ Գ. Տոնոյանի անվան միջն. դպրոց

Երևան 2022

Բովանդակություն

1. Ներածություն----------3
2. Երեխայի առաջին օրերը դպրոցում----------4
3. Բանավոր խոսքի զարգացում----------5
4. Լեզվական, ուղղագրական և կետադրական նախագիտելիքների հաղորդում-----7
5. Գրավոր խոսքի զարգացում----------9
6. Հնչյունային լսողությունը որպես գրաճանչության գործընթացի արդյունավետության գրավական:----------11
7. Եզրակացություն----------13
8. Առաջարկություն----------14

Ներածություն

Ձեզ երբեք չի հաջողվի
ունենալ իմաստուններ,
եթե երեխաների մեջ
ապանեք չարաճճիությունը:

Ժան Ժակ Ռուսո

Ընդունված ու տարածված է ‹‹Երեխաները մեր կյանքի ծաղիկներն են›› արտահայտությունը: Երբ ծաղիկները խատուհանագոգին, թաղարի մեջ սկսում են չորանալ կամ անառողջ ու անխնամ տեսք ստանալ, մենք չենք մեղադրում նրանց, չենք տանջում ցողուններին ու տերևներին, այլ ձգտում ենք պարզել նրանց թողնելու պատճառները և աշխատել դրանք վերացնելու ուղղությամբ: Իսկ եթե սխալներ են թույլ տալիս մեր կյանքի ծաղիկները՝ երեխաները, մենք հաճախ ենք մտածում. ‹‹Ինչպես պատժենք նրանց, որ մեծանան ու դառնան օրինավոր մարդիկ››:

Երեխայի առաջին օրերը դպրոցում

Դպրոցը երեխայի համար նոր աշխարհ է՝ նոր հետաքրքրություններով, հոգսերով և տպավորություններով ու դառնություններով լի: Աշակերտի առաջին օրերը դպրոցում պետք է հագեցված, բովանդակալից, աշխույժ, թեթև ու հաճելի լինեն, իսկ դրա համար ուսուցիչը պետք է բազմակողմանիորեն նախապատրաստված լինի, հաշվի առնի ուսումնական ժամանակի յուրաքանչյուր վարկյանը, դասը տանի մի քանի պլանով՝ նկատի ունենալով թե՛ դաստարակչական ու կրթական աշխատանքների և թե՛ խաղի ու աշխատանքի նպատակահարմար զուգակցումը, գրաճանաչության ուսուցման համար երեխաներին մտավոր ու ֆիզիկական տեսակետից հնարավորին չափ լավ նախապատրաստելը:Դրա համար անհրաժեշտ կլինի որոշակի աշխատանք տանել հետևյալ ուղղություններով:

Ծանոթացումը դպրոցական կարգուկանոնին անհրաժեշտ պայման է բոլորովին նոր ու անծանոթ միջավայրում երեխաների արդյունավետ աշխատանքի համար: Այս առումով ուսուցիչը պետք է նկատի ունենա հետևյալ հիմնական հարցերը, որոնք կարևոր նշանակություն ունեն աշակերտներին դպրոցին ծանոթացնելու համար.

9. Աշակերտների տեղաբաշխումը՝ ըստ նրանց առողջական տվյալների ու դպրոցական առողջապահության պահանջների:
10. Աշակերտների փոխադարձ ծանոթացումը, որը դասարանական համերաշխ կոլեկտիվի ստեղծման հիմքն է:
11. Դպրոցական կարգ ու կանոնի բացատրումը, որը նպետք է ուղեկցվի համապատսխան ձևերի ցուցադրումով, որպեսզի երեխաների մոտ երեխաների այս կամ այն կանոնը դառնա կարողություն:
12. Ճիշտ նստել սովորեցնելը, որը ոչ միայն առողջապահական կանոնների պահպանման, այլև երեխաների ֆիզիկական նորմալ զարգացման և դասերին ակտիվ մասնակցելլու հիմնական նախապայմաններից մեկն է: Դպրոցական կարգուկանոնի ուսուցումը և համապատասխան կարողությունների ձևավորումը,

որոշակի կերպով անդրադառնում է երեխաների կամքին ու բնավորության ձևավորման վրա:

Բանավոր խոսքի զարգացումը

Խոսքի զարգացումը նույնպես կարևոր նշանակություն ունի գրաճանաչության ուսուցմանը երեխաներին նախապատրաստելու գործում: Առաջին դասարանաի աշակերտի խոսքի զարգացման համար անհրաժեշտ են երեք բաղադրիչներ, որոնց աշխատանքները պետք է իրականացնել միաժամանակ, միմյանց հետ սերտորեն կապված: Դրանք են.

13. Բառապաշարի հարստացում և կատարելագործում,
14. Խոսքի արտահայտչականության՝ առոգանության և տրոհության պահպանում,
15. Լավ պատմելու կարողության մշակում:

Երեխայի խոսքի զարգացման համար շատ օգտակար կարող են լինել երկկողմյան զրույցները, բանավոր պատմումներն և ընթերցումները, նկարների օգտագործումը, էքսկուրսիաները, ոտանավորների ու երգերի ուսուցումը, ժամանակակից ուսուցման տեխնիկական միջոցները:

Տարրական դասարանների աշակերտների բանավոր ուսուցման և խոսքի զարգացման համար բացառիկ նշանակություն ունի ուսուցչի խոսքը, որովհետև ինչպես-որ ուսուցիչն է խոսում, այնպես էլ նրա աշակերտներն են ձգտում խոսել, նմանվել նրան ընդօրինակել նրա բառերը, նախադասություններ կազմելու ձևերը, արտահայտությունները, լեզվական արտահայտչական միջոցները և նույնիսկ խոսելու տոնն ու եղանակը:

Բանավոր խոսքի զարգացմանը մեծապես նպաստում է նկարների բովանդակության վերարտադրումը: Գունավոր, գեղեցիկ նկարները նպաստում են երեխաների տարածական ըմբռնումները, պատկերացումների ու խոսքի զարգացմանը:

Բանավոր խոսքի զարգացմանը մեծապես նպաստում են նաև հեքիաթներ պատմելը:

Աշակերտների բանավոր խոսքի զարգացման ուղղությամբ տարվող աշխատանքներում առանձնահատուկ տեղ, դեր ունի ընկալածի

վերարտադրությունը:

Կարևոր նշանակություն ունի նաև առաջադրված նյութի անգիր անելը: Ոտանավորներն ու գեղարվեստական արձակ հատվածներ անգիր անելը մեծապես նպաստում է տվյալ նյութի բովանդակության խոր ընկալմանը,այդ բովանդակությանն արտահայտող բառերի ու արտահայտությունների յուրքացմանը, շատ բանով օգնում է նաև ռիթմի ու արտահայտչականության, տոնի ու տեմպի մշակմանը :

Բանավոր խոսքի զարգացմանը նպաստում են նաև էքսկուրսիաները, դասարանական ու դպրոցական շնորհանդեսները աշակերտական ցերեկույթներն ու հավաքները:

Քերականության և ուղղագրության ուսուցումը նույնպես նպաստում է խոսքի զարգացմանը:

Այսպիսով՝ բանավոր խոսքը ոչ միայն մարդու գրագետ լինելու հիմնական չափանիշներից մեկն է , ամենօրյա հաղորդակցման միջոցը, այլև գրավոր խոսքի զարգացման հիմքերի հիմքը:

Լեզվական,ուղղագրական և կետադրական նախագիտելիքների հաղորդում

Գրաճանաչության նախապատրաստական շրջանում երեխաները գործնական տեղեկություններ են ստանում ամբողջական պատմության կամ խոսքի, նախադասության, բառի, վանկի, միավանկ և բազմավանկ բառերի, հնչյունի, ձայնավոր և բաղաձայն հնչյունների, տառերի մասին: Սակայն այդ հասկացությունները տրվում են նկարների, գծային մոդելների և մասամբ բանավոր խոսքի հիմքով:

Հնչյուներն ու տառերն անցնելուն զուգընթաց աշակերտները գաղափար են ստանում մեծատառի ու փոքրատառի, տպագիր ու ձեռագիր տառերի, մարդկանց անունները մեծատառով գրելու մասին:Գրաճանաչության շրջանում տառերը սովորելուն զուգընթաց երեխաներն գաղափար են կազմում նաև մի շարք հնչյուններին տառային արտահայտությունների օրինաչափություններին, այսինքն ուղղագրական կանոնների մասին, որոնցից *օ, է, ը* հնչյունների, *ե, ո, և* տառերի ուղղագրությունը, գաղտնավանկի և տողադարձի օրենքները և այլն:

Պետք է խուսափել ուղղագրական կանոններն անգիր անել տալուց, ավելի մեծ տեղ պետք է տալ գրավոր վարժություններին՝ գործնական ձևով սովորեցնելով ուղղագրական օրինաչափությունները:

Այս ընթացում երեխաները հետզհետե ծանոթանում են և տարբերակում վերջակետը, ստորակետը, գիծը, ստորակետ-գիծը, միջակետը, կախման կետերը, բազմակետերրը, չակերտները, բացականչական ու հարցական նշանները, շեշտն ու բութը՝ որոշակի հաջորդականությամբ ու աստիճանական բարդացումով:

Յուրաքանչյուր կետադրական նշանի ճանաչումը, ինչպես նաև գործածության ամենապարզ դեպքերի գիտակցումը կապված է կարդալու համար առաջադրված բնագրերում նրա գործածության հետ, ոևպեսզի ուսուցումը միշտ կոնկրետ բնույթ կրի, կապվի կարդալու ը գրելու աշխատանքների հետ:

Լեզվական վարժություններից պետք է տարբերել տրամաբանական վարժությունները, որոնց նպատակը երեխաների վերացական մտածողության զարգացումն ու կատարելագործումն է, որպեսզի այս տարիքիվ երեխան սովորի գործադրել մտածողության հիմ,նական ձևերը՝ համեմատությունը, վերլուծությունը, համադրությունը, ընդհանրացումը և սահմանապակումը:

Երեխաները սովորում են խմբավորել և առանձնացնել առարկաները ըստ դրանց հիմնական հատկանիշի նույնության ու տարբերության, նույնատիպ առարկաներն անվանել մեկ բառով, կամ կոնկրետ ու եզակի առարկաներն անվանել անվանել մեկ բառով, կամ կոնկրետ ու եզակի առարկաները դնել ընդհանուր անվանումների տակ:

Գրավոր խոսքի զարգացումը

Եթե բանավոր խոսքի հիմնական տարբերիչ կողմը ուղղախոսությունն է, ապա գրավոր խոսքի համար տարբերիչ ու առանձնահատուկ կողմեր են վայելչագրությունը, ուղղագրությունը և կետադրությունը՝ առանց որոնց գրավոր խոսքը զրկված կլինի հաղորդակցման ընդհանուր միջոց լինելու առանձնահատկությունից:

Գրավոր խոսքի զարգացման համար տարրական դասարաններում գործածվում են հետևյալ գրավոր աշխատանքները՝

- Արտագրություն
- Թելադրություն
- Շարադրություն
- Գործնական գրություններ (հերթապահության ցուցակ, դասացուցակ, օրվա ռեժիմ, նամակ…)

Տարրական դասարաններում տարվող գրավոր աշխատանքները ըստ բնույթի լինում են *դասարանային և տնային*: Տնային գրավոր աշխատանքներն իրենց քանակով տարրական դասարաններում պետք է մոտավորապես հավասար լինեն դասարանային գրավոր աշխատանքներին: Առաջին դասարանում աշակերտներն ամեն օր թե դասարանային, թե տնային գրավոր աշխատանք պետք է կատարի, որպեսզի ձեռքը վարժվի գրելու մեջ, հետևողականորեն մշակվի և կատարելագործվի գրելու կարողությունները: Երկրորդ և երրորդ դասարաններում, շաբաթական կարելի է տալ երկուսից-երեք դասարանային, նույնքան էլ տնային գրավոր աշխատանք՝ նայած աշխատանքների ծավալի, բարդությանը և աշակերտների ընդհանուր ծանրաբեռնվածությանը:

Դժվարության տեսակետից գրավոր աշխատանքները դասարանային աշխատանմքերի օրգանական շարունակությունն է և երեխային

նախաօատրաստումեն ինքնուրույն գործունեության համար, սովորեցնում են իր ստացած գիտելիքները գործադրել:

Բազմապիսի ու բազմաթիվ են լինում աշակերտների ձեռագրերում նկատվող նկատվող թերությունները: Գրելու ուսուցման վայելչագրության գործում շատ մեծ են ընդօրինակման նշանակությունը: Հետևաբար ուսուցչի օչինակելի ձեռագիրը հսկայական դաստիարակչական ու կրթական նշանակություն ունի երեխաների համար:

Տառերը տգեղ ու անհամաչափ գրության, սխալ կապակցման ու համանման այլ թերությունների վերացման հիմնական միջոցը ուսուցչի ցույց տված օրնակն է, որպեսզի նա կարող է տալ տետրում կամ գրատախտակի վրա:

Գրավոր աշխատանքները պետք է ստուգել նույն օրը, նշումներ անել կարմիր գույնով , գեղեցիկ, պանզ ու ընթեռնելի ձեռագրով: Սխալ գրված բառը կամ բառակազմությունը կամ նախադասությունն ուղղելու համար, վրան ձախից աջ՝ ամբողջ երկայնքով գիծ քաշել և վերևում գրել ճիշտը: Սխալ դրված կետադրական նշանն ուղղելու համար, գրվածի վրա պետք է գիծ քաշել և կողքին գրել ճիշտը: Երրորդ դասարանից սկսած երբեմն կարելի է սխալները ընդգծել, բայց վերևում չգրել ճիշտը, Թողնել, որ աշակերտներն իրենց բառ-գրքույկի օգնությամբ գտնեն սխալ գրված բառերի ճիշտ ձևերը և գրեն աշխատանքի ներքևում:
Աշակերտը պետք է գիտենա, որ իր կատարած աշխատանքը գնահատվում է ամբողջությամբ վերցրած՝ ձեռագրի գեղեցկության, մաքրության ու ճշտության և ոչ թե ըստ թույլ տրված սխալների քանակի:

Հնչյունային լսողությունը որպես գրաճանաչության գործընթացի արդյունավետության գրավական

Երեխաների հնչյունային լսողության զարգացման համար լավագույն միջոց է պարզ բանաձևերի շուրջ կատարվող լսելու, արտաբերելու և վերլուծելու վարժությունը, որից հետո կարելի է անցնել նաև բառերի վերլուծությանը, ծանոթ հնչյունի տեղի որոշմանը բառի մեջ: Այս նպատակով Այբբենարանում տրված են բազմաթիվ նկար բառեր, որոնց շուրջը տարվող հնչյունային վերլուծության միջոցով երեխաների մոտ զարգանում է գրաճանաչությունը:

Զարգացած հնչյունային լսողությունը գրաճանաչության գործընթացի արդյունավետության ապահովման գլխավոր պայմանն է և նախաայբբենական շրջանի խնդիրներից հիմնականը:

Սովորաբար դպրոց ընդունվող բոլոր առողջ երեխաերն ունեն լիարժեք հնչաարտաբերման կարողություններ, ակտիվ բառապաշար և քերականորեն ճիշտ կառուցված խոսք, սակայն ոչ բոլորն են կարողանում լսել և առանձնացնել իրենց արտասանված բառերի հնչյունները: Սակայն առաջին դասարանցիների մեջ հաճախ են նկատվում հնչյունային լսողության զարգացման անբավարար մակարդակի պատճառները: Համակարգված հստակ ճիշտ աշխատանքի դեպքում նորմալ մտավոր զարգացման ընթացքի մեջ գտնվող երեխաների հնչյունային լսողությունն արագ կատարելագործվում է:

Այս կարևոր խնդրի լուծումը հիմնականում պիտի իրականացնի դիդակտիկ խաղերի միջոցով, որոնք ամենաարդյունավետ միջոցներն են:

Ներկայացվող հնչյունային լսողության զարչգացմանը նպաստող մի քանի խաղ ներկայացնենք.

Խաղ- «Այն ո՞վ է կանչում»:

Նպատակը՝ զարգացնել երեխաների լսողությունը,ուշիմությունը, հնչյուներն ունկընդրելու կարողությունը, ծանոթացնել տարբեր բանաձևերի:

Ընթացքը՝ Աշակերտներից մեկը հրավիրվում է գրատախտակի մոտ: Նա կանգնում է մեջքով, դեպի դասարանը: Ուսուցիչը հերթով մոտենում է երեխաներին և շշնջում, թե ինչ միջատի, թռչունի, կենդանի ձայն պիտի հանի տվյալ երեխան: Երեխաները ձայն են տալիս կու՛-կու՛, բը՛զզ, կվա՛-կվա՛, կը՛ռռռ և այլն: Գրատախտակի առջև կանգնած երեխան ոչ միայն պիտի ասի, թե բնության մեջ ո՞ր կենդանին է այդ ձայնը հանում,այլև որ երեխան էր կանչողը:

Սխալվող երեխան պիտի կամ երգի, կամ հանելուկ ասի, կամ…

Խաղ. «Գտի՛ր սխալը»:

Նպատակը – Սովորեցնել երեխաներին լսել և ճիշտ արտաբերել տարբեր հնչյունները (ձայնավոր, բաղաձայն), զարգացնել բառերը հնչյունային վերլուծության ենթարկելու կարողությունները, ձևավորել բառի վանկահնչյունային կառուցվածքը գծապատկերի միջոցով, ճանաչելու ունակությունը, զարգացնել երեխաների ուշիմությունը:

Կահավորումը-Առարկայական նկարներ, որոնց հետևում մատիտով տրված են նկարում պատկերված առարկաների անվանումների գծապատկերները: Գծապատկերների մի քանիսը սխալ է գծված:

Առաջադրանք-դիտել նկարները, որոշել համապատասխան գծապատկերները, գտնել գծապատկերների սխալները և ուղղել:

Եզրակացություն

Կատարելով այս աշխատանքը եկա այն եզրակացությանմ որ տարրական դասարանում ուսուցման հիմնական նպատակը բառապաշարի հարստացումն է, ինչպես նաև կապակցված խոսքի մշակումը:

Դպրոցական կարգ ու կանոնի ուսուցումը և համապատասխան կարողությունների ձևավորումը, որոշակի կերպով անդրադառնում է երեխաների կամքի ու բնավորության ձևավորման վրա:

Պետք է խուսափել ուղղագրական կանոններն անգիր տալուց, ավելի մեծ տեղ պետք է տալ գրավոր վարժություններին՝ գործնական ձևով սովորեցնելով ուղղագրական օրինաչափությունները:

Առաջարկություն

Երկար տարիների իմ աշխատանքային փորձից ելնելով՝ ունեմ առաջարկություն:

Չի՛ կարելի երեսունհինգ աշակերտի հետ դասավանդել մեկ դասարանում: Մենք կոտրում ենք նրանց դիրքը, ուրախությունը, ժպիտը, պատրաստակամությունը, նաև ազատ, անկաշկանդ խոսելու կարողությունը: Նա ձեռք է բարձրացնում անմեղ, պարզունակ հայացքով նայում է աչքերիդ, ուզում է ինքն էլ խոսի, պատասխանի հարցերին, բայց փոքրիկ ձեռքը մնում է այդպես օդում կախված, իսկ աչքերի կայծը՝ անուշադրության մատնված: Հետզհետե սովորելու ցանկությունն էլ կմարի:

- Ինչու՞:
- Որովհետև ժամանակը չի բավականացնում:

Այսպիսով՝ մենք մեր երեխաներին մղում ենք անգրագիտության:

Գրականություն

1.Աշոտ Տեր-Գրիգորյան- ‹‹Հայոց լեզվի մեթոդիկա››

2.Արև Բալայան - ‹‹Նախաշավիղ››

3.Ջուլիետա Գյուլամիրյան - ‹‹Ընտանիք և դպրոց››

4.Վաչագան Սարգսյան – Այբբենարան (Ուսուցչի ձեռնարկ)